ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 օգոստոսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

106
(3315)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Հայաստանի Ազգային ժողովի 9-րդ գումարման ձեւավորումը միայն հերթական խորհրդարանական ցիկլի մեկնարկը չէ: Թեեւ արտաքինից տեղի ունեցած փոփոխությունները կարող են թվալ տեխնիկական՝ նոր նախագահ, նոր ղեկավար կազմ, հանձնաժողովների վերաբաշխում, իրականում գործընթացը շատ ավելի խորքային է: Ռուբեն Ռուբինյանի ընտրությամբ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, սկսում է իշխանության նոր ճարտարապետության կառուցումը, որտեղ խորհրդարանը պետք է ոչ միայն օրենսդիր մարմին լինի, այլեւ քաղաքական վերահսկողության նոր հենակետ:

Ռուբեն Ռուբինյանը վերջին տարիներին հանրության համար ասոցացվել է առաջին հերթին արտաքին քաղաքականության, հատկապես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի հետ: Սակայն նրա տեղափոխումը Ազգային ժողովի նախագահի պաշտոն նշանակում է, որ վարչապետը նրան վստահում է արդեն ոչ թե միայն դիվանագիտական, այլեւ ներքաղաքական կարեւորագույն դեր:

ԱԺ նախագահի պաշտոնը Հայաստանի քաղաքական համակարգում վաղուց դադարել է բացառապես արարողակարգային լինելուց: Այն դարձել է իշխանության ներսում բալանսավորող, երբեմն նաեւ ճգնաժամային իրավիճակներում քաղաքական գործընթացները կառավարող կենտրոններից մեկը: Ռուբինյանի նշանակմամբ Փաշինյանը խորհրդարանի ղեկավարումը հանձնում է այն քաղաքական գործչին, որը համարվում է իր ամենահավատարիմ թիմակիցներից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կառավարության ներսում տիրում է անորոշ եւ խառնաշփոթ իրավիճակ: Թեեւ Նիկոլ Փաշինյանը մի շարք նախարարների նշանակել եւ վերանշանակել է իրենց պաշտոններում, իշխանության ներքին շրջանակներում դեռեւս հստակ պատկերացում չունեն, թե ինչ փոփոխություններ են սպասվում առաջիկայում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ հիմնական անհանգստությունը կապված է վարչապետի աշխատակազմի նախկին ղեկավար Արայիկ Հարությունյանի պաշտոնից հեռանալու հետ: Իշխանական շրջանակներում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ արդեն հանձնարարական կա, որ վարչապետի աշխատակազմի նոր ղեկավար Լիլիթ Մակունցը կառավարության համակարգում պետք է գրեթե ամբողջությամբ՝ մոտ 90 տոկոսով, նոր աշխատակազմ ձեւավորի: «Ժողովուրդ»-ի աղբյուրները նշում են, որ այժմ համակարգում գրեթե բոլորը սպասում են Լիլիթ Մակունցի որոշումներին: Խոսքը վերաբերում է ոչ միայն վարչապետի անմիջական ենթակայության տակ գործող կառույցներին, կոմիտեներին եւ դեպարտամենտներին, այլեւ վարչապետի աշխատակազմի ներքին ստորաբաժանումների սովորական աշխատակիցներին: Ըստ նույն աղբյուրների՝ պետական կառավարման համակարգում ձեւավորվել է սպասողական մթնոլորտ, եւ շատ պաշտոնյաներ դեռ չեն պատկերացնում՝ կշարունակեն իրենց աշխատանքը, թե կհայտնվեն սպասվող կադրային լայնածավալ փոփոխությունների թիրախում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արդեն շուրջ երեք ամիս է, ինչ ընտրությունների օրերին Ռուսաստանից Հայաստան ժամանած Հովհաննես Սահակյանը չի կարողանում վերադառնալ ՌԴ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Սահակյանի պաշտպանը նրա նկատմամբ կիրառված դատավարական սահմանափակումների վերաբերյալ բողոք է ներկայացրել վերաքննիչ քրեական դատարան եւ սպասում է դատարանի որոշմանը: Միեւնույն ժամանակ, նախաքննական մարմնում հարուցված քրեական վարույթը փաստացի որեւէ առաջընթաց չի արձանագրում: Հիշեցնենք, որ ընտրությունների օրը «Շանթ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Հովհաննես Սահակյանը հայտնել էր, որ Մոսկվայից եկել են մասնակցելու քվեարկությանը եւ նույն օրը պատրաստվում են վերադառնալ Ռուսաստան: «Մոսկվայից եկել ենք ընտրենք, երեկոյան 7-ին հետ ենք վերադառնում»,- ասել էր նա: Լրագրողի՝ «Նո՞ւյն օրը» հարցին ի պատասխան՝ Սահակյանն արձագանքել էր. «Անպայման, որ կարող ա խառնվի վիճակը, էրեխեքի հետ ենք, չմնանք էլի բարդություններին»: Սակայն ավելի ուշ, երբ նա փորձել էր «Զվարթնոց» օդանավակայանից մեկնել Մոսկվա, իրավապահները նրան ձերբակալել էին: Ավելի վաղ ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնել էին, որ ստացված առերեւույթ հանցագործության մասին հաղորդման համաձայն՝ Հ. Ս.-ն, ըստ նախնական տվյալների, տեղեկացված լինելով նախապատրաստվող հանցագործության մասին, այդ մասին չի հայտնել ՀՀ իրավասու մարմիններին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Նոր խորհրդարանում իր մանդատը պահպանած եւ կրկին Ազգային ժողովի պատգամավոր դարձած Ագնեսա Խամոյանը հանրությանը հայտնի է իր երկարամյա լրագրողական գործունեությամբ: Նրա ակտիվ քաղաքական կարիերան մեկնարկեց 2021 թվականի հունիսի 20-ին, երբ նա ԱԺ պատգամավոր ընտրվեց «Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: Ուսումնասիրելով ընդդիմադիր պատգամավորի պաշտոնական հայտարարագրերը՝ ներկայացնում ենք նրա գույքի, ֆինանսական միջոցների եւ եկամուտների շարժը՝ պաշտոնը ստանձնելու օրվանից մինչեւ 2025 թվականը ներառյալ: 2021 թվականի օգոստոսի 2-ին պատգամավորի պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագրի համաձայն՝ Ագնեսա Խամոյանը համատեղ սեփականության իրավունքով հայտարարագրել է 2016 թվականին գնման եղանակով ձեռք բերված մեկ բնակարան Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում: Թեեւ նա սեփական տրանսպորտային միջոց չի ունեցել, սակայն նշել է, որ 90 եւ ավելի օր փաստացի տիրապետում է 2012 թվականի արտադրության Mazda մակնիշի ավտոմեքենայի: Պաշտոնը ստանձնելիս նրա կանխիկ միջոցները կազմել են 10 միլիոն դրամ եւ 6 հազար եվրո, իսկ եկամուտը եղել է 1 միլիոն 595 հազար 291 դրամ, որը գոյացել է «Շարկ» ՍՊԸ-ից ստացած 1 միլիոն 69 հազար 482 դրամ աշխատավարձից եւ ՊԵԿ-ից ստացված 525 հազար 809 դրամ այլ եկամուտներից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՈՐԵՎԷ ՊԱՇՏՈՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՉԷ»

ArmLur.am-ը զրուցել է Ազգային ժողովի ՔՊ խմբակցության պատգամավոր Տարոն Չախոյանի հետ:

- Պարոն Չախոյան, արդեն տեղեկություններ կան, որ Դուք լինելու եք այն իշխանական պատգամավորը, որը հաճախ սուր ելույթներ է ունենալու, կստեղծի վիճաբանությունների առիթ: Երեկ, կարծես, Ձեր ելույթի ժամանակ իրավիճակը մի պահ լարվեց: Ինչպե՞ս եք տրամադրված: Կա՞մ նման տրամադրվածություն ընդդիմության նկատմամբ:

- Տեսեք, հարցն այն է, որ ես կողմ եմ, որպեսզի իշխանության եւ ընդդիմության միջեւ բանավեճերը տեղի ունենան բարեկրթության սահմաններում: Սակայն դա ամենեւին չի նշանակում, որ ընդդիմությանը չպետք է ասվի այն, ինչ իրականությունն է: Երեկ ես պարզապես բարձրաձայնել եմ հարցեր եւ ասել այն, ինչ իրականություն է: Եթե դա ընդդիմության մոտ ջղաձգումներ է առաջացրել, ապա այդ հարցում ես մեղավոր չեմ: Կարծում եմ՝ մեր ընդդիմությունը, ուզենա թե ոչ, պետք է սովորի առերեսվել իրականությանը:

Ամեն ինչ սկսվեց այն պահից, երբ ես բարձրաձայնեցի, որ Կտրիճ Ներսիսյանը խախտել է կուսակրոնության ուխտը եւ ունի զավակներ: Չգիտես ինչու, ընդդիմությունը դա ընդունեց ագրեսիվ եւ ջղաձգված արձագանքով: Սակայն նույնիսկ անձամբ Կտրիճ Ներսիսյանը մինչ օրս չի հերքել, որ ունի զավակներ: Եթե ինքը չի հերքում այդ փաստը, ապա չեմ հասկանում՝ ինչի համար են ընդդիմադիր գործընկերները պայքարում: Կրկնում եմ՝ ընդդիմությունը պետք է սովորի առերեսվել իրականությանը:

- Գրեթե բոլոր ընդդիմադիրների ելույթների ժամանակ նկատելի է, որ Դուք տեղից արձագանքում եք, երբեմն փոխում եք դեմքի արտահայտությունները: Արդյո՞ք դա շարունակվելու է: Ի վերջո, Ռուբեն Ռուբինյանն էլ կոչ արեց հաշտվել, հարգել միմյանց եւ լսել նաեւ ընդդիմության խոսքը:

- Նույն կերպ կարելի է նկատել, որ իմ կամ իմ գործընկերների ելույթների ժամանակ ընդդիմադիր պատգամավորներն էլ են նման արձագանքներ տալիս: Կարծում եմ՝ դա բնական է եւ որեւէ արտառոց երեւույթի տեղիք չի տվել:

- Այսինքն՝ ծեծուջարդի սպասելիք չկա՞:

- Ես նման բան չեմ կարծում եւ թույլ էլ չեմ տա, որ իրավիճակը հասնի դրան: Բայց կրկնում եմ՝ ընդդիմությունը պետք է բարեկրթության սահմաններում սովորի բանավիճել եւ առերեսվել իրականությանը:

- Պարոն Չախոյան, ինչո՞ւ գործադիրից տեղափոխվեցիք օրենսդիր իշխանություն: Ո՞րն է Ձեր նպատակը:

- Պատասխանը շատ պարզ է: Նախ՝ որեւէ պաշտոն հավերժական չէ, եւ ոչ մի տեղ գրված չէ, որ ես ցմահ պետք է աշխատեի վարչապետի աշխատակազմում: Վաղ թե ուշ այդ պաշտոնին պետք է հրաժեշտ տայի: Երկրորդ՝ ես լեգիտիմ ընտրությունների արդյունքում ստացել եմ պատգամավորի մանդատ, եւ կարծում եմ, որ պարտավոր եմ ընդունել այդ մանդատը եւ տեր կանգնել ժողովրդի տված քվեին:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Ո՞Վ ԿԼԻՆԻ ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օգոստոսի 11-ին Վեդի համայնքի ավագանին նիստ է հրավիրելու: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ օրակարգի գլխավոր հարցերից մեկը լինելու է համայնքի ղեկավարի ընտրության կամ նշանակման հարցը: Իշխանական շրջանակներից ստացված տեղեկությունների համաձայն՝ քննարկվում է տարբերակ, ըստ որի՝ համայնքի ղեկավար կարող է ընտրվել գործող ավագանու անդամներից մեկը: Թե ով կլինի թեկնածուն, առայժմ վերջնական որոշում չկա, եւ հարցը դեռ քննարկումների փուլում է:

Հիշեցնենք, որ ներկայումս Վեդի համայնքը համայնքապետ չունի: Գարիկ Սարգսյանը, որը հանրությանը հայտնի դարձավ նաեւ «կոկորդիլոսագետի» մասին իր սկանդալային հայտարարություններով, հրաժարվել է համայնքի ղեկավարի պաշտոնից եւ ստացել Ազգային ժողովի պատգամավորի մանդատը: Այժմ նա զբաղվում է պատգամավորական գործունեությամբ:

Այսպիսով, առաջիկա ավագանու նիստը կարող է վճռորոշ լինել Վեդի համայնքի նոր ղեկավարի ընտրության հարցում:

Ս. Գ.

ՄԻՆՉԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՎԱՐՏԻ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը երեկ հայտարարել է, որ Բաքուն նախատեսում է մինչեւ 2027 թվականի սկիզբը ավարտին հասցնել դեպի հայ-ադրբեջանական սահման տանող երկաթուղային եւ ավտոճանապարհային ենթակառուցվածքային նախագծերի հիմնական աշխատանքները:

Բաքվում Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի ղեկավար, ԵԱՀԿ գործող նախագահ Իգնացիո Կասիսի հետ համատեղ ասուլիսի ընթացքում Բայրամովը նշել է, որ Ադրբեջանը «բարձր տեմպերով կատարում է ստանձնած պարտավորությունները», իսկ տրանսպորտային նախագծերի իրականացման մակարդակը բավական բարձր է:

Նրա խոսքով՝ աշխատանքներ են իրականացվում հատկապես Նախիջեւանի ուղղությամբ: Բայրամովը նշել է, որ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում առկա է շուրջ 180 կմ երկարությամբ երկաթուղային գիծ, որը մոտ 30 տարի չի շահագործվել եւ վերականգնման համար պահանջում է լրացուցիչ ներդրումներ ու լայնածավալ վերակառուցում:

Ադրբեջանի ԱԳ նախարարը նաեւ անդրադարձել է Թուրքիայի տարածքում իրականացվող Կարս-Իգդիր երկաթուղային նախագծին՝ ընդգծելով, որ դրա շինարարությունն արդեն մեկնարկել է:

Բայրամովի խոսքով՝ այս նախագծերի ավարտը պետք է նպաստի Ադրբեջանի հիմնական տարածքի եւ Նախիջեւանի միջեւ տրանսպորտային կապի վերականգնմանը, ինչպես նաեւ նոր հնարավորություններ ստեղծի «Արեւելք-Արեւմուտք» եւ «Միջին միջանցք» երթուղիների զարգացման համար:

Ա. Վ.

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԻՋԱՄՏԵԼ Է

Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը հայտարարել է, որ Ադրբեջանը միջամտել է Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ընդունման գործընթացին: Նրա խոսքով՝ Իսրայելի կողմից այդ փաստի ընդունումը լուրջ մտահոգություն էր առաջացրել Բաքվում: «Քանի որ եղբայրական Թուրքիայի շահերն Ադրբեջանի համար միշտ էլ առաջնային են եղել, այդ հարցը մեզ համար անփոփոխ «կարմիր գիծ» է»,- թուրքական Haber Global հեռուստաալիքին հայտարարել է ադրբեջանցի պաշտոնյան:

«Հենց այդ հարցն առաջացավ, պարոն նախագահի (նկատի ունի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ խմբ.) հանձնարարությամբ Ադրբեջանն սկսեց դիվանագիտական ակտիվ աշխատանք: Մենք իսրայելական կողմին ենք հասցրել մեր դիրքորոշումը. նման որոշման ընդունումը նախեւառաջ անարդար կլիներ, չէր արտացոլի պատմական իրականությունը, եւ մենք այն անընդունելի ենք համարում»,- հայտարարել է Հաջիեւը: Նրա խոսքով՝ Բաքվի համար դրական էր այն փաստը, որ «իսրայելական կողմը լուրջ է ընդունել Ադրբեջանի մեսիջները»:

«Մենք կարծում ենք, որ այս հարցի հետագա առաջխաղացումը կանխվել է: Մեր կարծիքով՝ նման քայլը ոչ մի դեպքում չէր արտացոլի պատմական իրականությունը եւ միանգամայն անարդար կլիներ»,- շարունակել է նա:

Հաջիեւի պնդմամբ՝ «սեղանի շուրջ, որտեղ չկա Թուրքիան, կա Ադրբեջանը, իսկ որտեղ չկա Ադրբեջանը, կա Թուրքիան»: «Մենք վճռականորեն արձագանքում ենք մեր երկրների շահերի դեմ ուղղված յուրաքանչյուր քայլին ու դա հետագայում եւս անելու ենք»,- թեման եզրափակել է ադրբեջանցի պաշտոնյան՝ փաստացի պնդելով, որ Իսրայելը Կնեսետի օրակարգից հանել է Հայոց ցեղասպանության ընդունման օրինագիծը հենց Ադրբեջանի միջամտությունից հետ:

Հաջիեւը խոսել է նաեւ ՀՀ Սահմանադրության փոփոխության գործընթացի մասին: Նրա խոսքով՝ ստացվող ազդակները վկայում են այն մասին, որ Հայաստանում սկսվում է նոր Սահմանադրության ընդունման գործընթացը: «Այն բանից հետո, երբ տարածքային այդ պահանջները դուրս կմղվեն ՀՀ Սահմանադրությունից, Ադրբեջանը խնդիր չի տեսնում վերջնական խաղաղության պայմանագրի ստորագրման համար: Ավելին, մեր տարածաշրջանում փաստացի արդեն առկա է խաղաղ իրավիճակ»,- ընդգծել է Հաջիեւը՝ հավելելով, թե ՀՀ Սահմանադրության մեջ «Թուրքիայի նկատմամբ եւս տարածքային պահանջներ կան»:

«Մենք ակնկալում ենք, որ Հայաստանի Սահմանադրությունից կհանվի այն դրույթը, որը նախատեսում է տարածքային պահանջներ Ադրբեջանի եւ Թուրքիայի նկատմամբ»,- ասել է նա: «Հայաստանում առաջիկայում կսկսվի նոր Սահմանադրության ընդունման գործընթացը: Հենց այդպիսի ազդանշաններ ենք ստանում: Հնարավոր է հանրաքվե անցկացվի: Հայաստանի Սահմանադրության նախաբանում Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջները բացառելուց հետո, մենք խոչընդոտ չենք տեսնում վերջնական խաղաղության պայմանագրի ստորագրման համար»,- թեման եզրափակել է նա:

ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ Է ՄՈՍԿՎԱՆ

Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը հայտարարել է, որ վերջին ամիսներին զգալիորեն ավելացել է դեպի Մոսկվա արձակվող անօդաչու թռչող սարքերի թիվը: Նրա խոսքով՝ Ռուսաստանի տարածքի դեմ գրեթե ամենօրյա հարձակումների ընթացքում արձակվող ԱԹՍ-ների մոտ երկու երրորդը ուղղվում է դեպի մայրաքաղաք:

«Վերջին ամիսներին Մոսկվայի ուղղությամբ արձակվող անօդաչուների թիվը զգալիորեն աճել է: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի տարածքի դեմ իրականացվող գրեթե ամենօրյա հարձակումների ընթացքում բոլոր անօդաչուների երկու երրորդը շարժվում է դեպի Մոսկվա»,- ասել է Սոբյանինը:

Նրա խոսքով՝ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը եւ Մոսկվայի իշխանությունները շարունակաբար ուժեղացնում են մայրաքաղաքի հակաօդային պաշտպանության համակարգերը:

«Նախագահի հանձնարարությամբ մենք շատ ակտիվ եւ սերտ համագործակցում ենք պաշտպանության նախարարության եւ հակաօդային պաշտպանության ուժերի հետ՝ մայրաքաղաքի անվտանգությունն ապահովելու համար: Միասին համալրում ենք հակաօդային պաշտպանության դիրքերը, տեղակայում ուժեր եւ միջոցներ, ինչպես նաեւ տրամադրում ենք զինվորականներին անհրաժեշտ աջակցությունը»,- նշել է Սոբյանինը:

Նա նաեւ հայտնել է, որ Մոսկվայում արտադրվում են անօդաչուներ որսալու համար նախատեսված հատուկ համակարգեր, իսկ զինված ուժերի հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների համար ձեւավորվում է կամավորական միավորում:

Ա. Վ.

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ ՀԱՍՑՆԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ օգոստոսի 4-ին ամբողջ օրվա ընթացքում Իրանի հետ «լավ» բանակցություններ են անցկացվել: Նա նշել է, որ Հորմուզի նեղուցը շուտով կբացվի, հակառակ դեպքում ԱՄՆ զինված ուժերը Իրանին շատ ուժեղ հարված կհասցնեն: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին Սպիտակ տան ղեկավարն ասել է Fox News-ի հետ զրույցում:

«Մենք շատ լավ քննարկումներ ենք անցկացնում: Նրանք չեն ցանկանում դա խոստովանել, - նշել է ԱՄՆ նախագահը: - Նեղուցը շատ շուտով կբացվի: Եթե նրանք կրկին նահանջեն, ապա շատ ուժեղ հարված կստանան»:

ԱՄՆ նախագահը հավելել է, որ Իրանը համաձայնագիր է ցանկանում: Թրամփի խոսքով՝ ինքը բավականաչափ ժամանակ ունի Իրանի հետ բանակցությունների համար:

Նա եւս մեկ անգամ կրկնել է, որ Իրանը չի կարող միջուկային զենք ունենալ: Թրամփը հավելել է, որ ամենածանր հարվածը դեռ առջեւում է, սակայն Վաշինգտոնը հույս ունի, որ ստիպված չի լինի դիմել այդ քայլին:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՈՎ Է ԱՊԱՑՈՒՑԵԼ

Ադրբեջանի նախագահի օգնական, նախագահի վարչակազմի արտաքին քաղաքականության հարցերի բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւը հայտարարել է, որ հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացը չի սահմանափակվում միայն հայտարարություններով, եւ Բաքուն գործնական քայլերով է ապացուցել խաղաղության նկատմամբ իր հանձնառությունը:

Թուրքական Milliyet թերթին տված հարցազրույցում Հաջիեւը նշել է, որ, իր պնդմամբ, «չնայած Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ իրականացված ցեղասպանությանը», Բաքուն ընտրել է բացառապես խաղաղության ճանապարհը:

«Այսօր Հարավային Կովկասում խաղաղություն է տիրում: Եթե հայ-ադրբեջանական պատերազմը շարունակվեր, ապա մեր հարեւան երկրներում ընթացող հակամարտությունների կայծերը կարող էին տարածվել նաեւ մեր տարածաշրջանում»,- ասել է նա:

Հաջիեւը դրական է գնահատել նաեւ Հայաստանի ներկայիս իշխանությունների կողմից առաջ քաշված «Իրական Հայաստանի» հայեցակարգը՝ նշելով, որ հայկական կողմը, իր գնահատմամբ, ընդունել է նոր աշխարհաքաղաքական իրողությունները եւ իր քաղաքականությունը ձեւավորում է այդ ուղղությամբ:

«Նրանք հասկացել են, որ երկար տարիներ իրականացված օկուպացիոն քաղաքականությունը հենց իրենց էր պահում պատանդի կարգավիճակում եւ գիտակցել են այդ ճանապարհի սխալ լինելը: Այժմ Հայաստանը հասկանում է, թե որքան կարեւոր են Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները սեփական զարգացման համար»,- հայտարարել է Հաջիեւը:

Նա նաեւ անդրադարձել է, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքին»՝ պնդելով, որ դրա բացումը նոր աշխարհաքաղաքական իրականության մաս է եւ բխում է ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի շահերից:

«Հայաստանը նույնպես հասկանում է, որ տարածաշրջանում տարանցիկ հնարավորությունների առկայությունը կարեւոր է իր զարգացման համար»,- ասել է Ադրբեջանի նախագահի օգնականը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ-Ն ԿՈՒԺԵՂԱՑՆԻ ՃՆՇՈՒՄԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը դատապարտել է ռուսական բանակի վերջին հարվածները Կիեւի եւ հարակից շրջանների վրա՝ հայտարարելով, որ Եվրամիությունն ու նրա գործընկերները կուժեղացնեն ճնշումը Ռուսաստանի նկատմամբ:

X սոցիալական հարթակում հրապարակված գրառմամբ Մակրոնը ռուսական հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ հարձակումներն անվանել է անընդունելի:

«Հրթիռների եւ անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ իրականացվող այս ահաբեկչական քաղաքականությունն անընդունելի է»,- գրել է Ֆրանսիայի նախագահը: Նրա խոսքով՝ յուրաքանչյուր նոր հարձակում եւս մեկ անգամ ապացուցում է, որ Ռուսաստանը պետք է պատասխանատվություն կրի իր ագրեսիայի համար:



«Աջակցելով Ուկրաինային՝ մենք չենք տրվի ո՛չ հոգնածությանը, ո՛չ էլ սպառնալիքներին»,- նշել է Մակրոնը:

Ֆրանսիայի նախագահը հավելել է, որ Եվրամիությունն ու իր գործընկերները կուժեղացնեն Ռուսաստանի նկատմամբ ճնշումը, այդ թվում՝ նոր պատժամիջոցների կիրառման միջոցով, ինչպես նաեւ կընդլայնեն Ուկրաինային տրամադրվող ռազմական աջակցությունը, որպեսզի այն կարողանա պաշտպանել իրեն եւ իր բնակչությանը:

Ա. Վ.

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Օգոստոսի 4-ին Հայաստանի ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն Արամ Ղազարյանը ընդունել է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ներկայացուցիչներին, գրում է Լուրեր.com-ը: Կողմերը քննարկել են աղետների կառավարման ոլորտում համագործակցության խորացումը՝ կարեւորելով տեխնիկական վերազինումը, մասնագիտական կարողությունների զարգացումը եւ Սենդայի գործողությունների ծրագրի իրականացումը, ինչպես նաեւ վերահաստատել են հետագա համատեղ նախաձեռնությունների պատրաստակամությունը:

Հայաստանն ու Ճապոնիան քննարկել են աղետների կառավարման ոլորտում համագործակցության խորացման հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են երկարամյա համագործակցությունը՝ ընդգծելով Ճապոնիայի աջակցությամբ իրականացված ծրագրերի դերը փրկարար ծառայության տեխնիկական վերազինման, մասնագիտական կարողությունների զարգացման եւ աղետների ռիսկի կառավարման համակարգի կատարելագործման գործում:

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԿԻԵՎԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Առնվազն 15 մարդ է զոհվել, տասնյակ մարդիկ վիրավորվել են Կիեւի եւ Կիեւի մարզի ուղղությամբ Ռուսաստանի գիշերային հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերով հարվածի հետեւանքով, հայտնել են ուկրաինական իշխանությունները:

Հաղորդվում է, որ սա Ուկրաինայի վրա ամենամասշտաբային հարձակումներից մեկն էր:

Կիեւի ռազմական վարչակազմը հայտնել է, որ հրթիռներն ու անօդաչու թռչող սարքերը հարվածել են բնակելի շենքերի եւ մի քանի պահեստների:

«Հակառակորդը նորից նպատակադրված հարվածներ է հասցնում խաղաղ բնակիչներին եւ քաղաքացիական ենթակառուցվածքներին», - ասվում է գերատեսչության հաղորդագրության մեջ:

Վարչակազմի տվյալներով՝ մայրաքաղաքում զոհվել է մեկ կին, առնվազն 26 մարդ վիրավորվել է. հարվածները հրդեհներ են առաջացրել քաղաքի չորս շրջաններում:

Կիեւի մարզում, տարածաշրջանային իշխանությունների տվյալներով, հարվածների հետեւանքով զոհվել է 14 մարդ, որոնցից ինը՝ Բրովարիի շրջանում, ավելի քան 20-ը վիրավորվել են:

«ՄՈՒԼՏԻ ՎԵԼՆԵՍ»

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԻՃԱՐԿՈՒՄ Է ՈՐՈՇՈՒՄԸ

«Մուլտի Վելնես» կենտրոնը դատական կարգով վիճարկում է Երեւանի քաղաքապետարանի որոշումը, որով օրերս ընկերությանը զրկել էին կառուցապատման իրավունքից, եւ տարածքն անցել էր համայնքին: Այս մասին գրում է «Ազատությունը»:

Ըստ դատալեքս տեղեկատվական համակարգի, «Մուլտի Վելնեսի» ներկայացուցիչը դատարանից խնդրում է անվավեր ճանաչել հունիսի 8-ին Երեւան քաղաքապետի կողմից կատարած գործարքը, որով քաղաքապետարանը միակողմանիորեն դադարեցրել է կալանավորված գործարար Գագիկ Ծառուկյանի հետ կնքած պայմանագիրը:

Գագիկ Ծառուկյանի փաստաբանը դատարանից պահանջում է նաեւ անվավեր ճանաչել Կադաստրի որոշումը, որով այս հուլիսի 14-ին դադարեցվել է «Մուլտի Վելնեսի» կառուցապատման իրավունքը եւ գույքն ամբողջությամբ գրանցվել է որպես Երեւան համայնքի սեփականություն: Կադաստրից չեն մեկնաբանում իրենց որոշումը:

Երեւանի քաղաքապետարանը շաբաթներ առաջ խզել էր Ծառուկյանի «Մուլտի Ուելնեսի» վարձակալության պայմանագիրը: Անցած շաբաթավերջին էլ արդեն քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց՝ այն վերաբացվել է նոր անունով եւ կլինի մայրաքաղաքային իշխանությունների վերահսկողության ներքո: Մինչդեռ, ընկերությունը քաղաքային իշխանության հետ դեռ 2016 թվականի հողի վարձակալության պայմանագրով այդ հողը կառուցապատման իրավունքով վարձակալել էր մինչեւ 2065 թվականը: Բայց Ավինյանը ծառուկյանից վերցրեց ոչ միայն հողը, այլեւ դրա վրա կառուցված շենքն ու ներսի գույքը:

Քաղաքապետարանից չեն մանրամասնում, թե որո՞նք են այս փոփոխության հիմքերը եւ արդյո՞ք պայմանագրում կան նման դրույթներ: «Ազատությունը» գրավոր հարցում է ուղարկել թե՛ այդ հիմքերի, թե՛ այս պահին համալիրի եկամուտները տնօրինելու օրինականության, ինչպես նաեւ գործարարին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ:

Գործը մակագրվել է դատավոր Արշակ Պետրոսյանին, նիստի օրը դեռ հայտնի չէ:

Օրերս հաղորդվել էր, որ ապօրինի գույքի բռնագանձման վարույթի շրջանակում պետության կառավարմանն է անցել Ծառուկյանի ընտանիքին պատկանող Երեւանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը:

ԿԱԼԱՆՔ

1 ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՑՎԵԼ Է

Երեկ Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ (դատավոր՝ Լեւոն Պետրոսյան)՝ քննիչի միջնորդությունը բավարարվեց մասնակի, եւ քաղբանտարկյալ Արմեն Աշոտյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարացվեց 1 ամսով, գրել է փաստաբան Ռուբեն Մելիքյանը:

Աշոտյանը կալանավորվել էր հունիսի հունիսի 5-ին: Հուլիսի 7-ին Աշոտյանի կալանքը 1 ամսով երկարաձգվել էր:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեից հայտնել էին, որ 2009-2016-ն ընկած ժամանակահատվածում կրթության եւ գիտության նախարարի պաշտոնը զբաղեցրած Արմեն Աշոտյանը, լիազորված լինելով խթանել կրթության եւ գիտության զարգացմանը, մշակել եւ իրականացնել կրթության եւ գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, 2008-ի օգոստոսի 20-ից մինչեւ 2014-ի ապրիլի 26-ը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ապա մինչեւ 2016-ի սեպտեմբերի 20-ը ֆինանսների նախարարի պաշտոնները զբաղեցրած Գագիկ Խաչատրյանի եւ վերջինիս որդու՝ Ա.Խ.-ի նյութական օգուտը՝ նրանց կողմից շահեկան պայմաններով, առանց խոչընդոտների, օտարման ոչ ենթակա գույք ձեռք բերելն ապահովելու անձնական շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով, խմբի կազմում՝ ՀՀ «Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Վ.Ս.-ի, նույն ՊՈԱԿ-ի ռեկտոր Գ.Գ.-ի, պրոռեկտոր Ա.Ա.-ի, Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի, ինչպես նաեւ վերջիններիս հետ փոխկապակցված Հ.Թ.-ի հանցակցությամբ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչի հետեւանքով ՀՀ սեփականության ֆոնդից կոռուպցիոն սխեմայի կիրառմամբ դուրս է բերվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Պուշկին փողոցի 38/1 շենքի թիվ 59 հասցեում գտնվող 208 մլն 908 հզր 500 դրամ արժեքով առանձնապես խոշոր չափերով 451.1 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը եւ դրա անբաժանելի մաս համարվող հողամասը եւ ոչ ուսումնական նպատակներով օգտագործելու համար փոխանցվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ վերջինիս հետ փոխկապակցված անձի սեփականության ֆոնդ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ԳՈՂՈՆ

Հուլիսի 13-ի առավոտյան ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ Դավթաշենի իրենց շենքի մոտ կայանված մեքենայից գողացել են դիմացի հատվածի դետալներ: Համայնքային ոստիկանության Դավթաշենի բաժնից մեկնած օպերատիվ խումբը պարզել էր, որ գիշերը ավտոկայանատեղիում հանելտարել են մեքենայի թափարգելը, լուսարձակները, հովացման համակարգի քողարկիչն ու շարժիչի ծածկոցը՝ պատճառելով մոտ մեկ միլիոն դրամի վնաս: Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ, որի շրջանակում համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ գողությունը կատարել է մայրաքաղաքի Մոլդովական փողոցի 36-ամյա բնակիչը: Բացատրական աշխատանքի արդյունքում նա ներկայացել է Համայնքային ոստիկանության Դավթաշենի բաժին՝ հետը բերելով գողոնը:

Նախաքննությունը շարունակվում է:

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Տավուշի մարզի դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայցադիմումներ էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ ֆիզիկական երկու անձի՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում գտնվող՝ 0.5 հա եւ 1.25 հա մակերեսով, 119 միլիոն 600 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասերի կառուցապատման իրավունքը հարկադիր դադարեցնելու պահանջներով: Այս մասին հայտնում են դատախազությունից: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 22-ի եւ 24-ի վճիռներով՝ Տավուշի մարզի դատախազության հայցերը բավարարվել են: Վճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, հողամասերի կառուցապատման իրավունքը կդադարեցվի, «Դիլիջան» ազգային պարկի տարածքում գտնվող՝ 0.5 հա եւ 1.25 հա մակերեսով հողատարածքները կվերադարձվեն Հայաստանի Հանրապետության տիրապետմանը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ

Հանցավոր դրսեւորումների կանխում՝ հնարավոր օջախների վերահսկողությամբ, ապօրինի զենքերի ու թմրամիջոցների հայտնաբերում՝ թիրախային հակազդմամբ: ՆԳՆ ոստիկանության ծառայողները նույն հետեւողականությամբ հանրապետության ողջ տարածքում շարունակում են հատուկ միջոցառումները: Միայն հուլիսի 22-ից 31-ը ՆԳՆ ոստիկանության ծառայողները շրջայցեր են իրականացրել տարբեր բնակավայրերի շուրջ երեք տասնյակ հավաքատեղիներում: Թիրախային աշխատանքի արդյունքում Համայնքային ոստիկանության բաժիններ են տեղափոխվել նախկինում դատապարտված եւ հանցավոր հակումներ ունեցող 425 անձ: Հայտնաբերվել եւ բաժիններ են տարվել նաեւ հետախուզման մեջ գտնվող անձինք: Հատուկ միջոցառումների ընթացքում հայտնաբերվել են մարտական եւ գազային ատրճանակներ, հրացաններ, կռփազենք, դանակներ, տարբեր տեսակի թմրամիջոցներ: ՆԳՆ ոստիկանությունը շարունակելու է օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումները՝ հասարակական կարգն ու հանրային անվտանգությունն ապահովելու նպատակով:

ԴԱՏԱՐԱՆ Է ՀԱՆՁՆՎԵԼ

Արմավիրի մարզում, 2026 թվականի 1-ին կիսամյակում, պետական եւ համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը եւ համայնքին վերջնական դատական ակտերով վերականգնված գումարի չափը կազմել է 8 միլիոն 440 հազար դրամ: Քրեական վարույթներով, ինչպես նաեւ դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ, պետությանը, համայնքին, պետական եւ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնված գումարի չափը կազմել է 7 միլիոն 101 հազար դրամ: Արմավիրի մարզի դատախազության կողմից, 2026 թվականի 1-ին կիսամյակում, ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 16 քրեական վարույթ, իսկ առանձնապես ծանր հանցագործություններով՝ 11 քրեական վարույթ: Ծանր հանցագործություններով օրինական ուժի մեջ է մտել 19 մեղադրական դատավճիռ, իսկ առանձնապես ծանր հանցագործություններով՝ 2 մեղադրական դատավճիռ:

● *Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 183 վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՆՎՃԱՐ ԵՆ ԴԱՐՁՐԵԼ

Օգոստոսի 3-ին, հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշել է. Դիլիջան համայնքի տարածքում գործող բոլոր ուսումնական հատատություններ հաճախող աշակերտների (աշակերտուհիների) եւ ուսանողների (ուսանողուհիների) ներհամայնքային ուղեւորափոխադրումների վճարների համար կիրառել զրոյական դրույքաչափ: Այդ որոշումն ուժի մեջ է մտնում 2026թ. սեպտեմբերի 1-ից: Համայնքապետ Դավիթ Սարգսյանը շտապել է համայնքապետարանի ինտերնետային կայքում համայնքի բնակիչներին աչքալուսանք անել աշակերտներին եւ ուսանողներին ուղեւորափոխադրումների վճարներից ազատելու մասին: Դիլիջան համայնքի ավագանու հունիսի 23-ի որոշմամբ ավագանու հերթական նիստը նշանակված էր սեպտեմբերի 10-ին, սակայն աշակերտներին եւ ուսանողներին ուղեվարձից ազատելու որոշումը կայացրել են ավագանու արտահերթ՝ օգոստոսի 3-ի նիստով: Ինչո՞ւ այդ որոշումը համայնքի ավագանին 2025թ. վերջին կամ 2026-ի սկզբին չի ընդունել, այլ օգոստոսի 3-ին՝ արտահերթ նիստում: Այդ նիստի օրակարգում ներառել են 8 հարց: Ընդդիմադիր «Ապրելու երկիր» խմբակցության անդամները Դիլիջան համայնքի ավագանու նիստերին չեն մասնակցում: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը ավագանու արտահերթ նիստ է նախաձեռնել, աշակերտների եւ ուսանողների ուղեվարձը անվճար դարձրել, որովհետեւ առաջիկայում տեղի կունենան Դիլիջան համայնքի ավագանու հերթական ընտրություններ, դիլիջանցիների քվեները ՔՊ-ին ու Դավիթ Սարգսյանին շատ են հարկավոր: Ամենայն հավանականությամբ՝ այդ ընտրությունները կնշանակվեն սեպտեմբերի 27-ին: Դիլիջան համայնքում բազում չլուծված հիմնահարցեր կան: Տուրիստական Դիլիջանի շատ փողոցներ անբարեկարգ են, քաղաքում աղբահանությունը վատ է կատարվում, Դիլիջան համայնքում հասարակական զուգարան, գյուղատնտեսական շուկա չկա, միջպետական ավտոճանապարհին կից գտնվող համայնքի աղբավայրը ցանկապատված չէ, այնտեղ շատ հաճախ են հրդեհներ լինում: 2021թ. փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված, իր անձնական գործում իր սեռի վերաբերյալ գրառման մեջ իր սեռը «արու» նշած Դավիթ Սարգսյանը անցած 5 տարում հայտնվել է սկանդալների մեջ: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի համայնքի ղեկավարի էջում տեղադրված է ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի կենսագրությունը: Այնտեղ նրա կրթության մասին նշված է. «2001-2006 թթ. սովորել է Դիլիջանի պետական քոլեջում, ավարտելով այն՝ ստացել է տնտեսագետի եւ հաշվապահական հաշվառման մասնագետի որակավորում, սովորում է Եվրոպական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում՝ հեռակա»: 1984թ. ծնված Դավիթ Սարգսյանն անցած տարի, 2024-2025 ուսումնական տարում ավարտել է Եվրոպական համալսարանը, դիպլոմ ստացել: Նա իրեն դեռ ուսանող է համարում, որ կենսագրության մեջ ուղղում չի մտցնում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՇԱՆԱԿՎԵՑ

Ո՞Վ Է ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

«Ժողովուրդ» օրաթերթի ընթերցողներն արդեն տեղյակ էին կառավարությունում սպասվող կադրային կարեւորագույն փոփոխության մասին. դեռեւս օգոստոսի 1-ին մենք բացառիկ տեղեկություն էինք հրապարակել այն մասին, որ «Միջազգային ռադիոցանց» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Թադեւոսյանը նշանակվելու է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար՝ փոխարինելով Մխիթար Հայրապետյանին:

Եւ ահա պաշտոնապես հրապարակված որոշումներով մեր լուրն ամբողջությամբ հաստատվեց: Օգոստոսի 3-ին ՀՀ նախագահի հրամանագրով Թադեւոսյանը պաշտոնապես ստանձնեց ԲՏԱ նախարարի պաշտոնը: Հրամանագրում ամրագրված է, որ հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը եւ համաձայն Սահմանադրության 150-րդ հոդվածի ու «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի դրույթների, Դավիթ Թադեւոսյանը նշանակվում է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

Քանի որ կառավարության կադրային փոփոխություններն ու առանցքային պաշտոնյաների անցած ուղին մշտապես «Ժողովուրդ» օրաթերթի խոշորացույցի տակ են, ապա հետահայաց անդրադարձով առավել մանրամասն ենք ներկայացնում բարձր տեխնոլոգիական ոլորտի նոր ղեկավարի կենսագրությունը: Նրա անձնական մասնագիտական հարթակների, մասնավորապես LinkedIn-ի օգտահաշվի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դավիթ Թադեւոսյանը ծնվել եւ մեծացել է Երեւանում: Նա հաճախել է Երեւանի թիվ 172 միջնակարգ դպրոցը, ընդ որում՝ դպրոցական տարիներին որոշ ժամանակ կրթություն է ստացել նաեւ արտերկրում՝ Ռուսաստանի Վոլգոգրադ քաղաքում եւ ԱՄՆ-ի Այդահո նահանգում: Ջուգահեռաբար նա ավարտել է Երեւանի Սարաջեւի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը:

Բարձրագույն կրթությունը նորանշանակ նախարարը սկսել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, որտեղ 1999-2003 թվականներին ստացել է պետական եւ մունիցիպալ կառավարման բակալավրի, իսկ 2003-2005 թվականներին՝ նույն մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան: Ուսումն ավարտելուց հետո մոտ մեկ տարի նա աշխատել է Երեւանում՝ ինտերնետային տեխնոլոգիաների ոլորտում գործող սկսնակ ընկերությունում, որից հետո որոշել է կրթությունը շարունակել արտերկրում: 2007 թվականի գարնանը նա մեկնել է Չինաստան եւ Պեկինում մասնակցել չինարեն լեզվի ուսումնասիրման մեկամյա ծրագրի: Հետագայում՝ արդեն 2012-2014 թվականներին, Դավիթ Թադեւոսյանը կրթություն է ստացել հեղինակավոր Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում (MIT)՝ դառնալով այդ կրթօջախի շրջանավարտ եւ ստանալով ճարտարագիտության եւ կառավարման մագիստրոսի աստիճան (Master of Science in Engineering and Management)՝ համակարգերի նախագծման եւ կառավարման մասնագիտացմամբ:

Անդրադառնալով նրա աշխատանքային փորձին՝ հարկ է նշել, որ Հայաստան վերադառնալով՝ նա 2008 թվականից որպես բիզնես խորհրդատու աշխատանքի է անցել «Գրանթ Թորնթոն Հայաստան» ընկերությունում: Նրա մասնագիտական կենսագրության մի ստվար հատված կապված է եղել «Վալլեքս Մայնինգ» ընկերության հետ, որտեղ նախ զբաղեցրել է վարչակազմի ղեկավարի եւ տեղակալի պաշտոնները, իսկ 2017-2018 թվականներին եղել է ընկերության գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը: 2019-2020 թվականներին Թադեւոսյանը եղել է SberSpinoff ընկերության գործառնական գծով փոխնախագահը (VP of Operations), ինչպես նաեւ աշխատել է Լեռնամետալուրգիայի եւ քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտում որպես տեխնիկական տնօրեն: Իսկ մինչեւ կառավարությանն անցնելը եւ վերջերս «Միջազգային ռադիոցանց»-ի ղեկավարումը ստանձնելը, 2024-2025 թվականներին նա զբաղեցրել է Նուբար Աֆեյանի Afeyan Initiatives for Armenia կազմակերպության տնօրենի պաշտոնը:

Հիշեցնենք, որ ի տարբերություն գործադիրի մյուս անդամների, որոնք պահպանեցին իրենց պորտֆելները, արդեն նախկին նախարար Մխիթար Հայրապետյանը չվերանշանակվեց, վերջինս Նիկոլ Փաշինյանի հետ տարաձայնություններ էր ունեցել ու հրաժարվել էր վերանշանակվել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԿՏԻՎԱՑԵԼ ԵՆ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին շրջանում սոցիալական ցանցերում ակտիվացել են բնակարանների վարձակալության վերաբերյալ խարդախությունները: Այս մասին հայտնում են ՆԳՆ Կիբեռոստիկանությունից:

Հանցավորները սոցիալական ցանցերում հրապարակում են գրավիչ լուսանկարներով եւ շուկայականից զգալի ցածր գներով կեղծ հայտարարություններ: Հայտարարությամբ հետաքրքրվելուց հետո նրանք, պատճառաբանելով, որ բնակարանի նկատմամբ մեծ հետաքրքրություն կա, պահանջում են անհապաղ փոխանցել կանխավճար՝ այն «ամրագրելու» նպատակով: Արդյունքում՝ գումարը ստանալուց հետո դադարեցնում են կապը, արգելափակում են ձեզ կամ ջնջում իրենց էջը:

Ինչպե՞ս պաշտպանվել

- Երբեք մի՛ փոխանցեք կանխավճար, քանի դեռ անձամբ չեք տեսել բնակարանը եւ չեք համոզվել, որ շփվում եք իրական սեփականատիրոջ կամ անշարժ գույքի գործակալության լիազորված ներկայացուցչի հետ:
- Եթե առաջարկը չափազանց շահավետ է թվում, մեծ է հավանականությունը, որ այն խարդախություն է:
- Ցանկացած վճարում կատարեք միայն գրավոր պայմանագրի կնքումից հետո:
- Ստուգեք այն օգտահաշիվը, որը հրապարակել է հայտարարությունը. վերջերս ստեղծված, քիչ ակտիվություն ունեցող կամ կասկածելի էջերը կարող են օգտագործվել խարդախության նպատակով:
- Հնարավորության դեպքում համոզվեք, որ բնակարանի լուսանկարները չեն օգտագործվել այլ հայտարարություններում կամ կայքերում:

Եթե կասկածում եք, որ դարձել եք խարդախության զոհ՝

Հնարավորինս արագ դիմեք ձեր բանկին, պահպանեք ամբողջ հաղորդագրությունների պատմությունը, փոխանցման անդորրագրերը եւ դեպքին առնչվող այլ տվյալներ, ապա անմիջապես տեղեկացրեք ոստիկանությանը:

Ջգոն եղեք եւ ցանկացած վճարում կատարելուց առաջ մանրակրկիտ ստուգեք առաջարկի իսկությունը:

● *Ըստ վիճակագրության՝ մարզերում հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 313 վարորդ:*

IDBANK

ՆՈՐ ՔԱՐՏ

IDBank-ի քարտերը համալրվել են նոր Mastercard World քարտով, որը նախատեսված է նրանց համար, ովքեր գնահատում են հարմարավետությունը ոչ միայն առօրյա գնումների, այլեւ ճանապարհորդությունների ընթացքում:

Նոր քարտի կարեւոր առավելություններից են՝

6 անվճար մուտք օդանավակայանների բիզնես սրահներ,

Fast Track ծառայությունից 6 անգամ անվճար օգտվելու հնարավորություն,

Շուրջօրյա կոնսիերժ ծառայություն,

1 ԳԲ ինտերնետ ռոումինգ,

50% զեղչ ճանապարհորդական ապահովագրության համար,

50% զեղչ IDBank-ի պահատուփերի վարձակալության համար,

10% idcoin՝ GetTransfer ծառայությունից օգտվելիս:

«Mastercard World քարտը թողարկվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով եւ գործում է 5 տարի: Idram&IDBank հավելվածով կամ IDBanking.am հարթակով այն պատվիրելու դեպքում առաջին տարվա սպասարկման վճարի համար կգործի 20% զեղչ: Մինչեւ 2026 թվականի օգոստոսի 31-ը նույն զեղչը հասանելի կլինի նաեւ IDBank-ի մասնաճյուղերում քարտ պատվիրելիս», - նշեց IDBank-ի Պրոդուկտների մշակման վարչության ղեկավար Հասմիկ Ղուկասյանը:

Նոր քարտի թողարկման առիթով՝ հատուկ արշավ

Բանկն ունի նաեւ անակնկալ՝ քարտի թողարկման առիթով: Մինչեւ 2026 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ Mastercard World քարտ պատվիրած յուրաքանչյուր հիմնական քարտապան կստանա 10,000 idcoin՝ քարտի ակտիվացման պահից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: 10,000 idcoin-ը տրամադրվում է մինչեւ 2026 թվականի նոյեմբերի 15-ը ակտիվացված քարտերի համար (1 idcoin = 1 AMD):

Բացի այդ, Mastercard World քարտով աշխարհի բոլոր հյուրանոցներում վճարելիս քարտապանները կստանան վճարման գումարի մինչեւ 25%-ի չափով idcoin, բայց ոչ ավելի քան հանրագումարային առավելագույնը 25 000 idcoin (հարկումից հետո)՝ տվյալ օրացուցային ամսում կատարված վճարումների դիմաց:

Տուրիստական ընկերությունների միջոցով կատարված վճարումները արշավին չեն մասնակցում: Արշավի շրջանակում idcoin տրամադրվում է միայն դրանց տրամադրման պահին գործող քարտերով կատարված գործարքների դիմաց: Եթե idcoin-ի տրամադրման պահին քարտը փակված է, ապա տվյալ քարտով կատարված գործարքների դիմաց idcoin չի հաշվարկվում եւ տրամադրվում: Mastercard World քարտին կից այլ տեսակի քարտերը չեն մասնակցում արշավին եւ դրանցով կատարված գործարքները չեն ներառվում հաշվարկում, բացառությամբ, եթե կից քարտը նույնպես Mastercard World չէ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Գ)

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ Գ

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվերս Բանկն ընդլայնում է համագործակցությունը թվային վճարումների համաշխարհային առաջատար Visa-ի հետ՝ հայտարարելով գործընկերության նոր փուլի մեկնարկի մասին, որը միտված է հաճախորդների փորձառության բարելավմանը եւ լոյալության լուծումների զարգացմանը:

Համագործակցության այս փուլը հատկապես կարեւոր է Բանկի ռազմավարական զարգացման ներկա փուլում, երբ Կոնվերս Բանկը շարունակաբար զարգացնում է C360 էկոհամակարգը եւ Converse Mobile հավելվածը՝ հաճախորդներին առաջարկելով առավել անհատականացված եւ արժեքավոր փորձառություն:

Համագործակցության նոր փուլի շրջանակում Կոնվերս Բանկին հասանելի կդառնան Visa-ի առաջատար տեխնոլոգիական լուծումները եւ միջազգային փորձառությունը, որոնք հնարավորություն կտան շարունակաբար ընդլայնել C360 էկոհամակարգի հնարավորությունները, զարգացնել լոյալության գործիքները եւ հաճախորդներին առաջարկել հավելյալ արժեք ստեղծող լուծումներ՝ միաժամանակ ընդլայնելով նրանց փոփոխվող կարիքներին համապատասխան նորարարական ծառայությունների հասանելիությունը:

Կոնվերս Բանկի եւ Visa-ի՝ 2002 թվականին մեկնարկած համագործակցությունն այսօր ներառում է նախաձեռնությունների լայն շրջանակ՝ քարտային առաջարկներից եւ միջազգային վճարային ծառայություններից մինչեւ տեխնոլոգիական նորարարությունների, միջազգային փորձի եւ խորհրդատվական աջակցության կիրառում:

Համագործակցության նոր փուլը նոր հնարավորություններ է ստեղծում զարգացող տեխնոլոգիաների առավել լայն կիրառման համար՝ արտացոլելով բանկային ծառայությունների՝ ավանդական ֆինանսական շրջանակներից դուրս զարգացումը: Visa-ի տեխնոլոգիական լուծումների եւ միջազգային փորձի կիրառմամբ Բանկը նպատակ ունի շարունակաբար ամրապնդել իր թվային հնարավորությունները եւ հաճախորդներին առաջարկել նորարարական ու նրանց կարիքներին միտված փորձառություն:

Այս համատեքստում Բանկը ռազմավարական առաջնահերթություն է համարում նաեւ Visa Consulting & Analytics ծառայությունների շարունակական կիրառումը: Visa-ի միջազգային փորձի եւ լավագույն փորձառությունների հիման վրա Կոնվերս Բանկն արդեն կատարելագործել է Converse Mobile հավելվածում առցանց նույնականացման, հաճախորդների գրանցման եւ հաշվի բացման գործընթացները: Համագործակցությունը նաեւ նպաստել է C360 հարթակի միջոցով հաճախորդների կարիքների եւ վարքագծի վերլուծության հնարավորությունների ընդլայնմանը՝ հնարավորություն տալով առաջարկել առավել հասցեական եւ անհատականացված լուծումներ:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԲԱՆԿԵՐ Գ

MOODY´S–Ը ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՀԵՌԱՆԿԱՐԸ

Միջազգային հեղինակավոր Moody´s վարկանիշային գործակալությունը, Հայաստանի սուվերեն վարկանիշի հեռանկարի բարձրացմանը զուգահեռ, Ակբա բանկի երկարաժամկետ ավանդների եւ թողարկողի Ba3 վարկանիշների հեռանկարը կայունից փոխել է դրականի:

Այս վարկանիշը հավասար է Հայաստանի Հանրապետության վարկանիշին եւ ներկայումս Moody´s-ի կողմից Հայաստանում տրվող հնարավոր ամենաբարձր մակարդակն է:

Գնահատականը բանկին շնորհվել է՝ հաշվի առնելով ակտիվների բարձր որակը, կապիտալի ամուր բուֆերը, ինչպես նաեւ վճարունակության եւ իրացվելիության բարձր ցուցանիշները:

Moody´s-ը նաեւ ընդգծում է Ակբա բանկի համակարգային նշանակությունը Հայաստանի ֆինանսական շուկայում, քանի որ բանկն ակտիվների ծավալով շարունակում է մնալ երկրի երեք խոշորագույն բանկերից մեկը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԿԱՅԱՑԵԼ Է ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ֆասթ Բանկի աջակցությամբ օրերս կայացել է Հայկական բժշկական ասոցիացիայի հերթական համաժողովը, որը մեկ հարկի տակ էր համախմբել բժշկության տարբեր ոլորտների առաջատար մասնագետների: Համաժողովը նվիրված էր մետաբոլիկ համախտանիշի կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման եւ կառավարման ժամանակակից մոտեցումներին: Ոլորտի մասնագետների քննարկման առանցքում բժշկական տարբեր մասնագետների միջեւ համագործակցության կարեւորությունն էր:

Ֆասթ Բանկի եւ Հայկական բժշկական ասոցիացիայի գործակցության շրջանակներում կայացել է նաեւ ալերգիկ հիվանդությունների, իմունային համակարգի խանգարումների թեմայով համաժողով: Բանկի կողմից նման առողջապահական եւ կրթական նախաձեռնությունների աջակցությունը նպաստում է մասնագիտական երկխոսության ընդլայնմանը, ժամանակակից բժշկական գիտելիքի տարածմանն ու առողջապահության ոլորտի կայուն զարգացմանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՈՐՈՇՈՒՄ

ՀՐԱՄԱՅՎԵԼ Է ՀԵՌՈՒ ՄՆԱԼ

Դատարանը մշտական դատաքննության որոշում է կայացրել 40-ամյա Քայլ Ռոբերտ Դեվիկի դեմ, ով տարիներ շարունակ հետապնդել է հայտնի ընտանիքի անդամներին: Որոշումը ուժի մեջ է երեք տարի եւ լրանում է 2029 թվականի հուլիսի 31-ին:

Դատական փաստաթղթերի համաձայն՝ Դեվիկի մոլուցքը Քայլի Ջենների նկատմամբ սկսվել է 2021 թվականին: Նա բազմիցս փորձել է ներխուժել աստղի տուն, մինչեւ երկրորդ փորձի ժամանակ ձերբակալվել է ապօրինի մուտք գործելու համար (հինգ անհաջող այցելություններից հետո):

Քրիս Ջենների խոսքով՝ հետապնդողը պատկերացրել է, որ նա իրեն հաղորդագրություններ է ուղարկում՝ հաստատելով Քայլիի նկատմամբ իր զգացմունքները եւ կոչ անելով ամուսնության առաջարկ անել: Քրիսը կտրականապես հերքել է մեղադրյալի հետ ցանկացած շփում՝ ընդգծելով, որ երբեք անծանոթի չէր ուղարկի իր դստեր տուն:

Վերջին ամիսներին իրավիճակը սրվել է: Քրիս Ջեների խոսքով՝ Դեվիկը կրկին փորձել է մոտենալ ընտանիքին.

Նա կապ է հաստատել անշարժ գույքի գործակալների հետ՝ փորձելով գնել կամ դիտել Քարդաշյան-Ջեներ տների մոտ գտնվող անշարժ գույքը:

Տղամարդուն հաջողվել է ներխուժել փակ տարածք եւ դիտել ընտանիքի սեփականությունից ընդամենը մեկ մղոն հեռավորության վրա գտնվող տունը (մասնավոր անվտանգության ծառայության տնօրենի խոսքով՝ սա Քիմ Քարդաշյանի հարեւանությամբ գտնվող տունն էր, որը նախկինում պատկանում էր Քանյե Ուեսթին): Անշարժ գույքի գործակալների կասկածները հարուցվել են նաեւ Դեվիկի կողմից Քայլիի վաճառվող տունը գնելու փորձի ժամանակ ներկայացված կեղծ փաստաթղթով, որը հաստատում է դրամական միջոցների առկայությունը:

Դատարանը այժմ խիստ սահմանափակումներ է կիրառել: Քայլ Ռոբերտ Դեվիկը պարտավոր է.

պահպանել առնվազն 90 մետր հեռավորություն Քրիսից, Քայլիից, Քենդալից, Քիմից, Քորթնիից, Քլոեից եւ Ռոբերտ Քարդաշյաններից:

զերծ մնալ նրանց հետ կապվելու կամ նրանց հասցեները ստանալու ցանկացած փորձից: Ընտանիքը լուրջ մտահոգություններ է հայտնել տղամարդու անկանոն վարքագծի, Կոլորադոյից Կալիֆոռնիա նրա ճանապարհորդությունների եւ նրա խնդրահարույց անցյալի վերաբերյալ (անվտանգության աշխատակիցները հայտնել են, որ նա նախկինում մեղադրվել է հարձակման մեջ):

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԿԱՆԴԱԼ

Ֆրանսիական մամուլում բռնկված նոր սկանդալը ստվեր է գցում 1998 թվականի աշխարհի առաջնությունում Ֆրանսիայի հավաքականի պատմական հաղթանակի վրա: Ֆրանսիայի նախկին սպորտի նախարար Մարի-Ժորժ Բյուֆեն խոստովանել է, որ 1998 թվականի տնային մրցաշարից առաջ գերատեսչությունը դադարեցրել է ազգային հավաքականի ֆուտբոլիստների արտապլանային դոպինգ-ստուգումները, գրում է armsport-ը: Այս աղմկահարույց բացահայտումն արվել է Մադրիդի «Ռեալի» եւ Ֆրանսիայի հավաքականի լեգենդար նախկին ֆուտբոլիստ Զինեդին Զիդանի մասին պատմող վավերագրական ֆիլմում: Ֆիլմում նախկին դոպինգ-տեսուչ Ալեն Գարնիեն պատմել է 1997 թվականին՝ աշխարհի առաջնությունից յոթ ամիս առաջ, Տինում կայացած ուսումնամարզական հավաքի ժամանակ տեղի ունեցած միջադեպի մասին: Այն ժամանակ սպորտի նախարարության բժիշկ Գարնիեն նախաձեռնել էր անակնկալ ստուգում, սակայն ֆուտբոլիստները ստիպել էին նրան սպասել մի քանի ժամ: Ի վերջո, հանձնված թեստերը բացասական արդյունք էին տվել:

«Շաբաթվա սկզբին, երբ հանգստյան օրերից հետո եկա նախարարություն, Մարի-Ժորժ Բյուֆեն ինձ հաստատեց, որ մինչեւ աշխարհի առաջնությունը ես այլեւս չպետք է անհանգստացնեմ Ֆրանսիայի հավաքականին: Այլ կերպ ասած՝ ոչ մի հանկարծակի ստուգում: Ես խնդրեցի դա ձեւակերպել գրավոր: Նա միայն ժպտաց, եւ ես միանգամից հասկացա, որ նման կարգադրություն թղթի վրա երբեք չեմ ստանա: Հենց այդ ժամանակ նա ինձ ասաց. «Եթե դա ձեզ չի գոհացնում, դիմեք Մատինյոն» (Ֆրանսիայի վարչապետի նստավայրը)»,- Գարնիեի խոսքերը մեջբերում է RMC Sport-ը: 1997-2002 թվականներին սպորտի նախարարի պաշտոնը զբաղեցրած Բյուֆեն, որը նախկինում հերքում էր բոլոր նմանատիպ մեղադրանքները, այժմ հաստատել է Գարնիեի խոսքերը. «Եթե դոկտոր Գարնիեն այդպես է ասում, ուրեմն դա ճշմարտություն է: Նա ազնիվ մարդ է: Մենք դա հենց այդպես չէինք ձեւակերպել, բայց էությունն այն էր, որ դա նահանջ էր: Աշխարհի առաջնությունից հետո մենք կրկին վերադարձանք դոպինգի դեմ պայքարին: Ցուցումը, հավանաբար, մեզ էր փոխանցվել նախարարությունների ապարատների միջոցով, բայց այն անձամբ վարչապետից չէր գալիս (այդ ժամանակ պաշտոնը զբաղեցնում էր Լիոնել Ժոսպենը)»:

Հիշեցնենք, որ 1998թ. աշխարհի առաջնության եզրափակչում ֆրանսիացիները 3-0 հաշվով ջախջախեցին Բրազիլիայի հավաքականին: Մրցաշարի հաղթող դարձած Ֆրանսիայի հավաքականի վերջնական հայտացուցակում ընդգրկված էին հետեւյալ ֆուտբոլիստները.

Դարպասապահներ՝ Ֆաբիեն Բարտեզ, Բեռնար Լամա, Լիոնել Շարբոնիե

Պաշտպաններ՝ Լորան Բլան, Մարսել Դեսայի, Լիլիան Տյուրամ, Բիքսանտ Լիզարազյու, Ֆրանկ Լեբյոֆ, Վենսան Կանդելա

Կիսապաշտպաններ՝ Քրիստիան Կարամբյո, Դիդիե Դեշամ, Զինեդին Զիդան, Պատրիկ Վիեյրա, Յուրի Ջորկաեֆ, Էմանուել Պետի, Ալեն Պողոսյան, Ռոբեր Պիրես

Հարձակվողներ՝ Տիերի Անրի, Դավիդ Տրեզեգե, Քրիստոֆ Դյուգարի, Ստեֆան Գիվարշ, Բեռնար Դիոմեդ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՅԱՑԵԼ Է

Երեւանում օգոստոսի 4-ին կայացել է Անիի պատմական կամրջի վերականգնման հարցերով Հայաստան-Թուրքիա համատեղ աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումը:

Հանդիպման ընթացքում կողմերն ընդգծել են Անիի պատմական կամրջի համատեղ վերականգնման մասին 2026թ. մայիսի 4-ին Երեւանում ստորագրված արձանագրության կարեւորությունը: Կողմերը պայմանավորվել են շարունակել ստորագրված արձանագրության շուտափույթ իրականացմանն ուղղված ջանքերը:

Հայաստանը եւ Թուրքիան Երեւանում Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի շրջանակում մայիսի 4-ին ստորագրել էին Անիի կամրջի վերականգնման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Հուշագրի ստորագրման արարողությունը տեղի է ունեցել Անիի կամրջի վերականգնման հարցով աշխատանքային խմբի առաջին հանդիպման շրջանակներում:

ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿՈՒՄ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆինանսավորմամբ «Հին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոցի Անապատ եկեղեցու տարածքում իրականացվող պեղումները շարունակվում են: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍ նախարարության «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ից: «Անապատ եկեղեցու հյուսիսային պատի տակ իրականացված մաքրման աշխատանքների արդյունքում լիարժեք տեսանելի է դարձել 1748-1749 թվականներին թվագրվող տապանաքարը, որը պատկանում է Ղրաբեկի որդի Սարքիսին:

Պեղումները կշարունակվեն մինչեւ օգոստոսի 31-ը եւ նպատակ ունեն նաեւ հստակեցնել հուշարձանի վերականգնման նախագիծը»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԻՆՉ ՓՈՒԼՈՒՄ Է ԱՐՁԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Գագիկ Ծառուկյանի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ Հատիս լեռան գագաթին կառուցվող Հիսուս Քրիստոսի հուշարձանային համալիրի աշխատանքները շարունակվում են՝ անկախ նրա կալանավորումից:

Հիշեցնենք, որ Գագիկ Ծառուկյանն այս պահին կալանավորված է: Նրա քաղաքական թիմակիցներն ու ընդդիմադիր մի շարք գործիչներ պնդում են, որ կալանավորումն անհիմն է եւ կրում է քաղաքական հետապնդման բնույթ: Մինչդեռ իրավապահ մարմինները գործի շրջանակում ներկայացրել են իրենց մեղադրանքները, իսկ հարցը շարունակում է մնալ հանրային եւ քաղաքական քննարկումների կենտրոնում:

Այս ֆոնին ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հատիս լեռան գագաթին իրականացվող շինարարական աշխատանքները չեն դադարեցվել: Մեր տեղեկություններով՝ աշխատանքներն ընթանում են նախատեսված ժամանակացույցի համաձայն:

Ավելին, ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ արդեն պատվիրված է նաեւ Նոյյան տապանի կրկնօրինակը, որը նախատեսվում է տեղադրել Հիսուս Քրիստոսի արձանի հարեւանությամբ՝ որպես համալիրի կարեւոր բաղադրիչներից մեկը:

Մեր տեղեկություններով՝ Նոյյան տապանի կրկնօրինակը հնարավոր է պատրաստ լինի մինչեւ 2026 թվականի ավարտը, իսկ ամբողջ հուշարձանային համալիրի շինարարական եւ բարեկարգման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ



● *Արամ Խաչատրյան համերգասրահում օգոստոսի 6-ին՝ ժամը 21:00-ին, կկայանա «Մալխաս ջազ բենդը տանիքում»:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞ւր դիմել, եթե վարկային ղատմությունը սխալ է կամ առկա է բողոք բյուրոյի հանդեպ:

Սուրեն Կիրակոսյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման եւ ուղղման նպատակով վարկառուն՝ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին): Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում Իմ ԱՔՌԱ անձնական գրասենյակից: ԱՔՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման եւ վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք առկա են հանրային կամ հանրային ծառայության ղաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերներ ստանալու հետ կապված սահմանափակումներ: Ի՞նչ իրավական ակտով են դրանք սահմանվում:

Դավիթ Սահակյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Նվերների ընդունման սահմանափակումների ինստիտուտը բարեվարքության համակարգի առանցքային բաղադրիչներից է, որը, ինչպես եւ մյուս տարրերը, նպատակ ունի կանխելու հնարավոր շահերի բախման իրավիճակների առաջացումը եւ պաշտոնական պարտականությունների նկատմամբ ազդեցությունը: Նվերների ընդունման սահմանափակումները նախատեսված են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որը կարգավորում է թույլատրելի նվերների ստացման, հաշվառման, հանձնման հետ կապված հարաբերությունները եւ նախատեսում արգելք՝ ոչ թույլատրելի՝ պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ստացման դեպքերի համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն, իր հերթին, լիազորված է հետեւելու նվերների ընդունման սահմանափակումների պահպանմանը եւ նվերների հաշվառման գործընթացը համակարգելուն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Խոշոր ավտովթար Գեղարքունիքի մարզում. բախվել են ռուսական համարանիշներով 2 «Kia»-ներն ու «Lada»-ն. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 10 + 15 + 25 + 29
Կոտայքի լեռներ	+ 11 + 15 + 24 + 29
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 + 31 + 34
Գեղարքունիք	+ 10 + 15 + 22 + 27
Լոռի	+ 15 + 20 + 23 + 26
Տավուշ	+ 15 + 18 + 24 + 26
Արագածոտնի լեռներ	+ 10 + 15 + 24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 19 + 24 + 31 + 36

Արարատ	+ 19 + 23 + 34 + 36
Արմավիր	+ 21+ 24 + 34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 10 + 15 + 24 + 28
Վայոց ձորի նախալեռներ	+ 20 + 24 + 34 + 36
Սյունիքի լեռներ	+ 10 + 14 + 20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15 + 27 + 29
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 + 33 + 36
Երեւան	+ 21 + 23 + 34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **05.08.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*